

ՄԱՍԿ

Տարեկան դիմը 10 րուբլ, կես տարեկանը 6 րուբլ:

Առանձին համարները 3 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանից խմբագրատան մէջ:

Օտարապետացիքը դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Маск»

Խմբագրատունը բաց է առաօտեան 10—2 ժամ

(Բացի կիրակի եւ տոն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:

Յայտարարութիւնների համար զմարում են
խորանայիս րոտին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆՊԱՎՈՐՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Նամակ բաժնուկից: Ներքին լուրերը: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Գերմանիա: Յոյն-թիւրքական սահման: Նամակ թիւրքականից: Արտաքին լուրերը: ՀԵՌԱՎԻՐՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ: ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Թիֆլիսի հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԽԱԳ ԲԱՌՈՒՄԻՑ

Մայիսի 5-ին

Ապրիլ ամսու 26 թիւին կիրակի գիշեր ժամը 7-ին զէպի լոյս երկուշաբթի Բաթում քաղաքի մէջ մի մեծ եւ ուրախելի հրդեհ տեղի ունեցաւ, որ գէթ 700,000 րուբլի վնաս պատճառեց հրդեհակոծից թէ կառուածատներին եւ թէ խանութներին: Այս հրդեհը, որ մեծ չուկային մէջն էր, 3 ժամուան մէջ լուրից 105 խանութներ, որոնցից 2—3 հատի ապրանքները միայն ապահովացրած էին. ապահովացրած ապրանքների արժէքը 20,000 րուբլու կը հասնէ: Հրդեհեանքը առհասարակ իրենց ապրանքների 1/8-ը հազիւ կատարողացան ազատել: Ամանք ալ ազատված ապրանքներն 1/3 մասը հազիւ կրցան ստանալ ստատուութեամբ յոգնաթիւ աւագակաց:

Գտնվեցան եւ այնպիսիք որք իրենց հոգիքն միայն կրցան փրկել մահաւէր կրակէն:

Հրդեհը պատճառ լայր ծովափին քանի մը քայլով հեռի տաճկաց հին աղէտի մօտն է: Հրդեհին ծագումը մէկ մէկգրէի խանութի կռնակի սենեակէն էր: Կրակը գերթ մի մահալուսնէ վիշապ սրացաւ մի շարքէն միւսը անցաւ, ահեղագոյ ճարձատմամբ մոխիր դարձուց եւ գետնի հաւատար ըրաւ գեղեցիկ շէնքեր, որոց մէջ փառաւորագոյնն էր Բաթումի բնակիչ Մկրտիչ Էֆէնդի Բըճճեանի շէնքը, որի երկրորդ դարկիւնի մէջն էր հաշտարար դատարարի գիւնատունը եւ նահանգական ժողովը, որտեղից դժուարաւ է մի պարտնի առաջարկածին, որ մի ներկայադու մտայ յօգուտ հրկիզելոց, գնեկալը խոհեմացած էի մնացել: Ես չէի կարողանում հաւատալ, աշխատում էի հաւատ չընծայել այդ լուրին, բայց... զբաղողաբար դա արդէն կատարված իրողութիւն էր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԵՐԵՆ ԳՐԱԳԵՐԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Այս օրերս դուրս եկաւ «Փորձի» № IV: Այդ ամսագրի մէջ, ինչպէս յայտնի է հասարակութեանը, գեանդում են «Թիֆլիսի հ. գ. հ. ընկերութեան» օրադրները: Այս անդամն էլ նոյնպէս ստովան է յիշեալ ընկերութեան տարեկան ընդհանուր ժողովի նիստի արձանագրութիւնը եւ տարեկան հաշիւը:

Ես այս անգամ գիտաւորութիւն չունեմ խօսելու ընկերութեան գործունէութեան եւ հաշիւ մասին ընդհանրապէս, միայն ուզում եմ հասարակութեան ուշադրութիւնը դարձնել մի փոքրիկ սխալի վրա, որը մտել է տարեկան հաշիւի մէջ:

Այդ հաշիւի մէջ կարգում ենք հետեւեալը. «Վըճարած է Կենտրոնական գրադատաւորացին ընկերութեան հաստատվելուց առաջ լոյս տեսած հրատարակութեանց» «Թաւառաղ Մեղու», «Կարմիր Լապտեր» եւ «Մանկական երգեր» գրքոյկների համար. 469 ր. 50 կ.:

ձեւարկան ասած՝ ես, վերադառնալով Թիֆլիս եւ լսելով ընկերութեան այդ ծախսի մասին, զար-

ջաւի սիրտ կըսեմ որ ոտակաւորութիւն չաւանդ զանուցեալ ի պատահել արկածիս: Այդ պահու ոտակաւորութիւնը ունէր միայն մի ջըրհան եւ այն դժբաղդաբար մինչեւ վերջը կարկառված էր:

Եթէ կամէր շատ դիւրութեամբ կարող էր խաբանել կրակը երբ չէր բռնկած դեմացի շարքը: Արդէն կը պակսէին հրդեհական գործիները: Կը դարձնամ թէ քնու համար կը հաւաքեն խանութպաններէ եւ կալուածատէրերէ քաղաքային զանազան օտարներ. մինչդեռ նըմանօրինակ արկածներու առաջին առեկելու միջոցներ կը պակսին:

Մինչ այժմս չը գիտցուցեալ հրդեհի պատճառը. միայն ականաւոր մարդիկէն ոմանք կը անն թէ արդէն այս այրած տեղերը բոլորը պիտի վերնային նաւահանգիստը ընդլայնելու համար: Այլը կըսեն թէ որովհետեւ մի քանի խանութներ, ապահովագրուալ էին, այդ պատճառաւ է: Հրկիզելոց վիճակը այժմս կապի դասն է. թէ ինչքանքէն եւ թէ տեղերէն զրկվեցան: Կան այնպիսիք, որ աւուր հացի կարօտ են եւ այնպիսիք որ փողոցներու մէջ մնացած են եւ պառկելու տեղեր կը պակսին: Ամենքն եւս աղքատ դուրսեան մէջ են: Այժմս միայն Էֆէնդի Բըճճեանի, որոյ 75,000 րուբլի ինչքը ոչնչացաւ սուղ ժամանակի մէջ: Արդեօք յուսով պարտիմք կառավարութիւնէն վարձատրութիւն մը անոնց համար. եթէ ոչ հաւատարմէն էր որ այրվողը յաւիտեան կորած են: Յանկալի էր որ կառավարութիւնը անտես չառնէ զայն վարձատրութեան մասին:

Ապերախութիւն պիտի ըլլար եթէ լուրթիւնամբ անցնէի նորին վստիւթեան գնեկալը: Կամարովի անձնուրիութիւնը չը յիշելով:

Նա ինքն իր պահպանող զորքերով շատ աշխատեցաւ շէնքեր փլցնելով, որոնք առաջի կային լափուկու, նա բոլոր Բաթումի մեծ շուկայն աղատեց, քաղաքը մարտնչեալ կրակին հետ, թէն ոտքին մէկը ցաւոցուց եւ ձեռքի երկաթ գաւազանը կտորեցաւ, բայց նորէն չը վճատեցաւ:

Մտաբերին այս է, որ չը գիտեմ ինչպէս եղած է մի պարտնի առաջարկածին, որ մի ներկայադու մտայ յօգուտ հրկիզելոց, գնեկալը խոհեմացած էի մնացել: Ես չէի կարողանում հաւատալ, աշխատում էի հաւատ չընծայել այդ լուրին, բայց... զբաղողաբար դա արդէն կատարված իրողութիւն էր:

Կենտրոնական (Արգար Գովհաննիսեանի եւ ընկ.) գրադատաւորացին եւ վերս յիշած երեք մանկական գրքոյկների հրատարակողների յարաբերութիւնները պարզելու համար, ես ստիպված եմ մի քանի մանրամասնութիւններ վրա խօսել. ես այդ իմ պարտաւորութիւնն եմ համարում:

Յայտնի է, որ այժման Թիֆլիսի ընկերութիւնը շարունակութիւն է մի փոքրիկ խմբի, որին ես եւս պատիւ ունեցայ մասնակցելու: Այդ փոքրիկ խումբը սկսեց իր գործունէութիւնը «Թաւառաղ Մեղու»-ի հրատարակութեամբ եւ գիտաւորութիւն ունէր շարունակել իր գործունէութիւնը. բայց աչքի առաջ ունեւորուի, որ իր գործունէութիւնը նիւթական միջոցները ուղղութեան պատճառով կարող է ժամանակով զարգարել, սկսեց դիմել այնպիսի միջոցներին, որոնցով գործը կը կարողանար ինքն իր անպաշտպան լինել:

Այդպիսիներից մին, անկասկած, ոտորագրութեան քայնեւն էր: Ստորագրութեամբ հաւաքած էր 220 ր., այն է՝ Նիկ. Միրզոյեան 100 ր., Արտեմ Գրիգորեանց 50 ր., Կարպի Տէր Օհաննիսով 50 ր., Կըր. Արովեանցներ 10 ր., Գով. Քեփիլեանց 10 ր.:

Երկրորդը եւ ամենագլխաւորը հետեւեան էր:

մուլեամբ պատախանց ասելով. «հարկաւոր է ներկայացում առ ոչ յօգուտ հրկիզելոց, այլ յօգուտ հրդեհական գործիներու, որովհետեւ կը տեսնեմ որ քաղաքային մեղուկը դատարկ է այդ մասին»:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Правитель. Вѣстн.» լրագրում հրատարակվեցաւ ժողովրդական լուսաւորութեան միջոցաբար մի շրջաբերական զէպի ուսումնարանական շրջանների հոգաբարձուները: Ահա այդ շրջաբերականի գլխաւոր բովանդակութիւնը: «Ժողովրդական լուսաւորութեան միջոցաբարութիւնը աւելի սակաւ քան թէ մի այլ հիմնարկութիւն, կարող է սահմանափակվել կանցելարիայում եւ ակադմի չը դնել հասարակական կարծիքի: Հոգաբարձուները ուսումնարանական շրջանների իրանց անընդհատ յարակցութիւններով տեղական իշխանութեան եւ տեղական հասարակական շրջանի հետ, պէտք է ծառայեն որպէս կապող օղակ տեղական պետքերի եւ կենտրոնական կառավարութեան մէջ: Համալսարանի վերաբերութեամբ միջոցաբար յայտնում է որ պէտք է վերականգնել 1863 թիւ համալսարանական կանոնադրութիւնը: Միջնակարգ դպրոցներում, բացի գիտութիւններից, պէտք է զարգացնել աշակերտների մէջ հակառակ դէպի տոկոսն աշխատանքը, մասաւոր կարողութիւնները, յարգանք դէպի կրօնի եւ բարոյականութեան սկզբունքները եւ զէպի կարգը, օրինադրութիւնը: Եւ պարզաբար կատարուին: Ահա ժեշտ են խնայելի դիտողութիւն, առողջապահութիւն եւ խնայելի կարգաւորումն պարագմութիւնների: Ահա ժեշտ են զարգացնել եւ ընտանիքի մէջ յարակցութեան հաստատումը: Գաղութների կեանքը պէտք է բաց լինի հասարակական հայեացքին: Ստորին դպրոցների վերաբերութեամբ կառավարութիւնը կը պահպանի նրանց վրա ընդհանուր վերահսկողութեան իրաւունքը, բայց դիւրեկտորները եւ տեսուչները պէտք է ներկայանան որպէս կառավարութեան հոգաբար ազնւոյններ, եւ ոչ թէ որպէս սահմանափակողներ հասարակութեան ինքնագործութեան: Նրանք պէտք

է համոզվեն որ ծառայում են հասարակական գործին եւ ոչ թէ հրամայում են նրան: Կրօնական դատարարութիւնը ազգի մէջ պէտք է լինի հիմնաքար ժողովրդական դպրոցի»:

«Голосъ» հաղորդում է որ պատասխան գնաւուց առաջ կոմս Լօրիս-Մէլիքով ներկայացաւ թագաւոր Կայսրին Գաղափնօի պալատի մէջ:

Օղէկայից «Новости» լրագրին հաղորդում են որ մայիսի 6-ին ժողովուրդը կտրեց հրէաների մի քանի խանութներ եւ գինեաներ: Հետեւալ օրը ամբողջ կտրեց աների մի քանի ազակիներ: Ընդհանուր երկիւղ է տիրում: Կարգը վերականգնեցրած է:

«Порядокъ» լրագրը ասում է որ հրէաների վարը հարաւային Ռուսաստանում նրանով են բացատրում, որ ժողովուրդը հարստահարված է եղել հրէաներից: Բայց այժմ յայտնվում է, աւելացնում է լրագրը, որ վարդուղների եւ կալանաւորվածների մեծ մասը ոչ թէ մայրօրսնակ են եղել, որոնք կարող էին զայրացած լինել հարստահարող հրէաների դէմ, այլ նրանց մեծ մասը եղել են բուն Ռուսաստանից եկած ամբոխի մարդիկ, որոնց նահանգներում արգելված է բընակվել հրէաներին, ուրեմն որոնք ոչ թէ միայն չէին կարող հարստահարված լինել հրէաներից, բայց երբեք չէին էլ տեսնել նրանց:

Վարդապատից մեզ գրում են: «Թագաւոր Կայսրի զահակաւորութեան օրինաւորաւորութիւն, Բագրի, Շամախու եւ Անդրկովկասի ալ տեղերի հայ բազմաթիւները ինչպիսիք ներկայացրին կառավարութեանը, աղաչելով որ նրանց համայնքը պաշտօնապէս ճանաչվի որպէս կրօնական անկախ համայնք եւ նրանց իրաւունք տրվի սեփական հայ-աւետարանական քարոզչիներ ունենալ եւ ոչ թէ դիւրմնացի պատուիրան (մի ցանկութեամբ որ նրանք արդէն տասն եւ հինգ տարի է որ յայտնում են), որպէս զի նրանք Թագաւորին հաւատարմութեան երդում տան իրանց համոզման համեմատ, իրանց արգելադրութեամբ եւ իրանց հոգեւոր անձերի ներկայութեամբ:

մառ-Բաթումայի «Մանկական երգեր» էր: Ես սկսեցի յանձնել Կենտ. գրադատաւորացին այդ հրատարակութիւնը պարտաւորելուն պէս մաս մաս, բայց երբ այդ գրքոյկների մնացածը բոլորովին պատրաստ էր եւ ես առաջարկեցի Կենտ. գրադատաւորացին ընդունել նրանց եւ վըճարել ինձ հասանելի գումարը, Կենտ. գրադատաւորացի ոչ թէ «Մանկական երգերի համար» փող է տուել, այլ յետ կանգնեց իր պայմանից, ասելով, որ ես կարող եմ տալ այդ գրքոյկը ծախելու եւ միւս գրադատաւորացին... այս առաջ էր ինձ այն ժամանակ, երբ Կենտ. գրադատաւորացի հրատարակութեան մի մասը արդէն ստացել էր եւ իր անուամբ զանազան քաղաքներ էր ուղարկել: Հասկանալի է, որ մի այլ գրադատաւորացի համաձայնի (եւ չը համաձայնվեց) կանխիկ վճարել այդ հրատարակութեան համար մեր խմբին, որովհետեւ գրադատաւորացի էր կանխիկ վճարել միայն այն պայմանով, որ մի որ եւ իցէ հրատարակութեան ծախողը միայն ինքն լինի, գոնէ հրատարակութեան առաջին տիպիսները, եւ այդ հրատարակութեան ամբողջ պահաւոր իր մօտ գտնվի:

Այսպէս՝ մնում էր «Մանկական երգեր» տալ կոմիտայի միւս գրադատաւորացին, ինչպէս եւ Կենտ. գրադատաւորացին:

Թիֆլիսի այժման ընկերութիւնը հաստատվեց եւ, ինչպէս յայտնի է հասարակութեան, ընդունեց մեր խմբի երեք հրատարակութիւնները, որովհետեւ, դարձեալ կրկնում ենք, այժման

Բայց որովհետև կառավարութեան պատասխանը յայտարարուած էր, իսկ երկու տարի չուտով պահանջուած էր, այդ պատճառով վարչապետի հայ բողոքականները, որոնց թիւը 50 տուն են, խմբովին դիմեցին լուսաւորչական հայոց եկեղեցին և այդտեղ երկու տուեցին հայ-լուսաւորչական քահանայի ներկայութեամբ, լուսաւորչական եկեղեցու ծէսին համեմատ:

Երեսնից մեկ գրում են: «Ահա քանի մի ամիս է որ Երեսնի թեմի առաջնորդ, Երեմիայի եպիսկոպոս, հրապարակած է համարում, իսկ թեմը մնաց առանց առաջնորդի: Երեսնի եպիսկոպոսը սաստիկ վշտացած է: Յիսուս տարի չարունակ նա աշխատել է մայր-աթոռի համար, իր կարողութեան չափ կալուածներ է թողել էջմիածնին, իսկ այսօր էջմիածինը իրաւունք չէ տալիս նրան մայր-աթոռը ոտք դնելու: Ասում են որ եպիսկոպոսը մտադիր է ուստաց կառավարութեանը դիմել, խնդրելով նրան ուժիկ նշանակել իրան»:

Երեսնից հետեւաւն են գրում մեզ: «Զորս, հինգ տարի է արդէն Երեսնի խանութների գիւլերապահների գլխաւորը մի հայ է, պ. Խաչատուր Խաչատուրեանց: Այդ պարտի ժամանակ Երեսնի բազարում գրեթէ ոչ մի խոշոր աւազակութիւն կամ գողութիւն չէ պատահում, այն ինչ, նրա նախորդ թուրքերի ժամանակ ամիս չէր անցնում առանց մի նշանաւոր գողութեան»:

Ներքին գործերի միջոցառում, կոմս Կոնստանտին չրվաքերականը խիստ տխուր գոյններով նկարագրում է Ռուսաստանի ներկայ գրութիւնը: Բայց այդ չրվաքերականը համակրութեամբ ընդունելիցաւ մարդաբանների բոլոր լրագիրներից, քանի որ նրա մէջ կառավարութիւնը խոստանում է դիմել հասարակական ոյժերի օգնութեանը այլ և այլ չարիքները վերցնելու համար: Այդ օգնութեան գործադրութեան ճանապարհը չրվաքերականը խոստանում է ժամանակով ցոյց տալ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ԳԵՐՄԱՆԻԱ

Նորերումս լրացաւ տաս տարի այն ժամանակից, ինչ Գերմանիան և Ֆրանսիան ըստորագրեցին խաղաղական դաշնագիրը Ֆրանկֆուրտ-Մայնի վրա քաղաքի մէջ: Գերմանական մամուլը այժմ հայացք է գցում

ընկերութիւնը ոչ այլ ինչ էր, քան մեր փոքրիկ խմբի շարունակութիւնը: Եւ ներկայացրի ընկերութեան վարչութեանը մանրամասն հաշիւ, որից երևում է, որ ես ծախսել եմ այդ երեք հրատարակութեան վրա հետեւեալը. «Թաւամազ Մեղու» 1200 օր.—403 ր. 42 Կ., «Կարմիր Լապտեր» 1500 օր.—464 ր. 45 Կ., «Մանկական երգեր» 2500 օր.—227 ր. 12 Կ.—ընդամենը՝ 1094 ր. 99 Կ.: Այդ գումարից, ինչպէս վերև յիշեցի, 220 ր. նուիրատուութիւններ են, 450 ր. կանխիկ վճարել է երկու գրքայի համար Կենտ. գրքաւոր, ուրեմն ես ծախսել եմ 424 ր. 99 Կ. իմ գրքանից: Առաջարկելով այդ հաշիւը ընկերութեան վարչութեան և, աչքի առաջ ունենալով ընկերութեան նրկական միջոցները, ես համաձայնեցայ ստանալ իմ ծախսած փողերը այն ժամանակ, երբ մեր խմբի հրատարակութիւնները կը ծախվեն: Եւ այն կարծիքի է (և մինչև այժմ էլ այլ կարծիքի չեմ կարող լինել), որ մեզանից ամեն մէկի պարտաւորութիւնն է հոգալ մի նորակազմ ազգային ընկերութեան նրկական միջոցների վրա, խնայել այդ միջոցները ըստ յետին կարողութեան չափ և ոչ թէ այնքան անխնայող գումարով, որ Մովսէս Խորենացու պատմութեան մի այն սրբագրութեան համար ծախսեց 168 րուբլներ (տուած է պ. Պաւլանին) — Երեսնից հարանոցի հայոց լեզուի ուսուցչին և պ. Անանեանին — «Փորձ» ամսագրի սրբագրողին վերև յիշած գրքի 13 թերթի սրբագրութեան համար: Ինչ և իցէ....

այդ ժամանակամիջոցի վրա և նկատում է շատ տխուր երևոյթներ, որոնք ծածկված են պատերազմական փառքի փայլով:

Պաշտօնական լրագիրները, թէպէտ համառութեամբ, յիշեցնում են իշխան Բիւսմարկի ծառայութիւնները գերմանական միութեան համար և պախարակում են անբաւականներին: «Post» լրագիրը նկատում է, որ գերմանական ժողովրդի արմատական պակասութիւնն այն է, որ անգագար ինքն իրան հակառակում է: Լրագիրը զարմանում է, որ մի քանի բարեմիտ քաղաքական գործիչներ ոչ թէ միայն մերժում են իրանց օգնութիւնը իշխան Բիւսմարկի քաղաքականութեանը, այլ և ընդդիմադրում են նրան:

Գերմանական միութեան հիշխումը անբաւական է գործերի այժմեան գրութիւնից: Բացի այդ անբաւական են հասարակական կարծիքը և ժողովրդի մեծամասնութիւնը: Գրանք են ստացված հետեւեալները Ֆրանկֆուրտի խաղաղական դաշնագրից յետոյ, որ մեծ փառքով պսակեց գերմանական զօրքերին և հօգնեցողներին թաղաւորող տան անդամներին:

Փորձից խրատված իշխան Բիւսմարկ կամեցաւ վերջապէս բաւականութիւն տալ ժողովրդի կենսական անտեսական պէտքերին: Գերմանական ժողովուրդը ծանրաբեռնված է գնումարական ահագին բեռով: Գերմանական առողջ ազգաբնակչութիւնը իւրաքանչիւր տարի տասնեակ հազարներով գաղթում է Ամերիկա և հետագայում այլ երկրներ, որովհետեւ իր երկրի և հզօր հայրենիքի մէջ կեանքի պայմանները շատ անտանելի են: Այլ ևս անկարելի էր անտարբեր մնալ դէպի ժողովրդի տնտեսական վատ գրութիւնը և հասարակական զանցները իրան յատուկ եռանդով սկսեց գործը ուղղել ընդարձակ վերանորոգութիւններով, չը վախենալով մինչև անգամ մեղադրանքներից սօցիալական հակամարտի մէջ:

Այս անգամ ընդդիմադրութիւնը աւելի էլ միացաւ և իր կողմը քաշեց գերմանական հասարակութեան ամենազարգացած տարրերը: Գրա պատճառն այն է, որ գերմանական կանցլերը կամեցում է իրագործել իր սեփական նախագիծները առանց ուշադրութիւն դարձնելու մասնագէտների

Բանը ոչ նրանումն է, որ ես ծախսել եմ մի գումար, որի ստանալը ես ինքս յետաձգել եմ, որ ընկերութիւնը չը ծանրաբեռնվի ծախսերով, ոչ նրանումն է, որ ընկերութեան վարչութիւնը աւելորդ համարեց ընկերութեան հաստատելուց առաջ նուիրատուներին չը ճանաչել, այն նուիրատուներին, որոնք, կարելի է ասել, ընկերութեան հիմնադրու սկզբնապատճառ երկրորդից մին էին, որոնց նուիրած փողերը ծախսած են առաջին հրատարակութիւնների վրա (չէ որ հաստատված ընկերութիւնը ոչ բարոյական և ոչ էլ, եթէ կամեցում էք, իրաւաբանական իրաւունք ունէր այդ հրատարակութիւնների չընդունելը և ընդունելը), այլ բանը նրանումն է, որ իմ թիֆլիսից հեռանալուց յետոյ Կենտ. գրաւաճառանոցը ներկայացնում է ընկերութեան վարչութեանը մի հաշիւ, որից երևում է՝ իբր թէ ես այդ գրաւաճառանոցից պարտք եմ վերցրել 469 ր. 50 Կ., և այդ գումարը Կենտ. գրաւոր ստանում է ընկերութեան բոլոր հրատարակութիւններից ծախսած գրքերի ընդհանուր գումարից, այն ինչ այդ 469 ր. 50 Կ. (19 ր. 50 Կ., երեկ, «Թաւամազ Մեղու»-ի և «Կարմիր Լապտեր»-ի ուրիշ քաղաքներ ուղարկելու ճանապարհածախս է) Կենտ. գրաւաճառանոցը, ինչպէս վերև բացատրեցի, կանխիկ վճարել էր միայն առաջին երկու հրատարակութիւնների հաշուում և պէտք է ստանար միայն այդ գրքայինների հաշուից: Կենտ. գրաւաճառանոցը մի փոքր շտապել է վերադարձնել

և հասարակութեան կարծիքի վրա: Ինքնաւ կամ գործողութիւնների այն միջոցները, որոնք օգտուէտ են լինում արտաքին քաղաքականութեան վերաբերութեամբ, կարող են փաստել, երբ կը գործադրվեն ներքին հարցերի վերաբերութեամբ, որոնք պահանջում են մասնագիտական տեղեկութիւններ և հասարակութեան օգնութիւնը: Որքան էլ բարձր է գնահատվում իշխան Բիւսմարկի քաղաքական գիտութիւնը, բայց նա անպայման անսխալական չէ համարվում, ինչպէս պնդում են պաշտօնական լրագիրները:

ՅՈՅՆ-ԹԻԻՐԳԱՅԱՆ ՍԱՀՄԱՆԸ

Լրագիրներին հաղորդում են Բերլինի Կոնֆերանցիայի վճիռների փոխելը և միւսերի ընդունելը, որոնք այնքան ձեռնտու չեն Յունաստանին, շատ վատ տպաւորութիւն գործեց Լաիրոսի քրիստոնեայ ազգաբնակչութեան վրա և ուրախացրեց մահմեդականներին:

Յուսալով, որ եւրոպական պետութիւնների օգնութեամբ հարաւարեւմտեան Լաիրոսը կը միանայ Յունաստանի հետ, սրա բնակիչները անպաշար դիմում էին պետութիւններին, խնդրելով ազատել նրանց թիրաքաց անասունի լուծից, և այժմ նրանք երկրիւր են կրում: Նրանց գրութիւնը աւելի էլ կը վատանայ, եթէ երկրի մէջ նոր կարող ու կանօն չեն հաստատվի և վերջ չի դնվի թիրաքերի կամայականութեանը, որոնք այժմ աւելի էլ զայրացած են քրիստոնեաների դէմ: Որքան անբաւական են Լաիրոսի յոյն բնակիչները Կ. Պօլսի Կոնֆերանցիայի վճիռներից, նոյնքան թիրաքաց իշխանութեան տակ մնացող մահմեդականներին հիացնում են այդ վճիռները: Նրանցից շատերը մինչև անգամ այն միտքն են յայտնում, որ խաղաղ ճանապարհով անկարելի է թէսալիան Յունաստանի հետ միացնել և որ եւրոպական պետութիւնները այդ բանը կը մեկնեն Յունաստանին: Թիրաք պաշտօնեաները, ինչպէս երևում է, նոյնպէս այդ կարծիքի են և շարունակում են իրանց պատերազմական պատրաստութիւնները: Վերջին տեղեկութիւնների համեմատ թէսալիայի մէջ եղած թիրաքաց զօրքերի

իր կանխիկ վճարած գումար և նրան այդ յաջողվել է....

Զարմանալիս այն է, որ եթէ պ. Ար. Յովհաննիսեանին, իբրեւ ընկերութեան նախագահին, յայտնի չէր, որ ես Կենտ. գրաւաճառանոցից պարտք չեմ վերցրել գրքեր հրատարակելու համար, նրան գոնէ իբրեւ Կենտ. գրաւաճառանոցի տեղերից միւսին պէտք է յայտնի լինէր այդ ուրեմն ինչպէս է նա թող տուել այդ ծախսը: Վերջապէս, չէ որ ես վարչութեանը ներկայացրել էի իմ հաշիւի հետ և Կենտ. գրաւոր երկու տուեցական, որոնց մէջ ցոյց է տուած թէ Կ. գրաւոր ինձանից քանի գիրք է ընդունել և որքան է կանխիկ վճարել:

Եթէ այս լուրերը «Թաւամազ Մեղու»-ն և «Կարմիր Լապտեր» ծախսած են 469 րուբլու, հասկանալի է, որ ընկերութիւնը այսուհետեւ էլ ոչինչ չէ կորցնում իր վարչութեան կարգաւորութեան շնորհիւ, բայց նա կարցրել է մինչև այժմ, որովհետեւ Կենտ. գրաւաճառանոցի հետ այդ երկու գրքայինների հաշիւը վերջացրել էր դեռ անցեալ տարի, եթէ չեմ սխալվում, նոյնիսկ ընդամենը. իսկ այս ժամանակամիջոցին ընկերութիւնը աւելորդ հաշուած փողերով կարող էր մի գրքով աւելի հրատարակել:

Վերջացնելով յօդուածս, ես պարտք եմ համարում առաջարկել ընկերութեան վարչութեանը գոնէ այժմ գրեթէ յօդուածիս սկզբում անուանված նուիրատուների անունները մտցնել ընկերութեան նուիրատուների ցուցակի մէջ,

թիւը հասնում է 40,000, որոնց թիւում 60 բառալիւն հետեւակ զօրքեր կան: Արտալի և Վոլօի նաւահանգիստների մուտքի մօտ տօրպիզներ են գրված և այդ իրողութիւնը յայտնված է եւրոպական կառավարութիւններին:

Թէ որքան յուզված է ժողովուրդը, կարելի է դատել այն հանգամանքից, որ Արտալի մէջ ստացված սուտ լուրը դրա նաւահանգիստը Յունաստանի հետ միացնելու մասին քիչ էր մնում առիթ տար մահմեդականների բացարձակ ապստամբութեանը: Մինչև անգամ այդ տեղի զօրքերը մի ժամանակ չէին կամենում հնազանդվել իրանց հրամանատարներին: Իսկապէս այդ զօրքերի մի մասը ալբանացիներ են, որոնք յայտնել են, թէ իրանք եկել են այդ տեղ յոյների հետ կռուելու համար: Այնուամենայնիւ Արտալի մէջ պատահած անկարգութիւնները իրանց վրա ուշադրութիւն դարձրին: Վերջին ժամանակները գործը յետաձգելու համար թիրաքերը օգուտ են քաղում մի նոր միջոցից, որ նրանց տալիս է Լաիրոսի և Թէսսալիայի բուլղարական ազգաբնակչութիւնը: Բուլղարները բողոքում են Լաիրոս և Թէսսալիան Յունաստանի հետ միացնելու դէմ: Բուլղարները մէջ մի քանի տարի առաջ կազմված բուլղարական ընկերութիւնը իր ցոյցերը տարածեց Լաիրոսի և Թէսսալիայի մէջ և կարողացաւ իր ցեղակիցներին զրգուել Յունաստանի դէմ: Հասկանալի է, որ թիրաքերը հովանաւորում էին բուլղարների այդ գործին: Նրանք մինչև անգամ խոստացել են պաշտպանել բուլղարական ազգութիւնը այդ նահանգների մէջ: Ի նկատի առնելով քաղաքական այժմեան հանգամանքները Լաիրոսի և Թէսսալիայի բուլղարական ազգաբնակչութիւնը թիրաքաց կառավարութեանը և պետութիւնների դեպատնեներին Կ. Պօլսի մէջ բողոք ներկայացրեց Յունաստանին որ և է զիջում անելու դէմ: Մի ուրիշ այդպիսի խնդրագիր ստորագրվում է բուլղարներից և շուտով Կ. Պօլսի կուղարկվի:

«Polit. Corresp.» լրագիրը հաղորդում է, որ յոյն-թիրաքական սահմանական խնդրի վճիռը դիպլոմատիական շրջանների մէջ վերջացած է համարվում: Այդ գործին շատ նպաստեց պետութիւններից մէկի առաջարկութիւնը՝ յայտնել յունական և

իսկ ծախսած «Թաւամազ Մեղու» և «Կարմիր Լապտեր» հաշուից դուրս գալով 469 ր. 50 Կ., և նոյնպէս ծախսած «Մանկական երգեր»-ից գույքած գումարը յանձնել ըստ պատկանելոյն այդ երեք հրատարակութիւնների վրա արած ծախսերը ծածկելու:

Եւ, իբրեւ թէ ընկերութեան և թէ հայոց հասարակութեան մի անգամ, կը ցանկալի սպասած տեսնել Թիֆլիսի ընկերութեան տարեկան մանրամասն հաշիւը, որի մէջ խնդրում եմ ընկերութեանը ամփոփել և իմ ներկայացրած առաջին երեք հրատարակութիւնների ծախուց մանրամասն հաշիւը: Անկասկած՝ մեր հասարակութեան ամեն մի անգամ անհամբեր սպասում է մի օրինաւոր հաշուին, որից կարելի լինէր իմանալ թէ ինչ գրութեան մէջ են մեր ընկերութեան նրկական միջոցները: Մեզանից շատերը դուցէ, տեսնելով ծախսերի մանրամասն հաշիւը, ձրարար առաջարկեն այն տեսակ աշխատութիւններ, որոնց համար անցեալ տարի վարձատրութիւն էր տրվում: Այսպէս թէ այնպէս մանրամասն հաշիւ հրատարակելուց ընկերութիւնը կարող է միայն օգուտ ստանալ և ոչ փնտս, իսկ մեր ամենքի սրտի փափագը, կարծեմ, միայն այդ է:

Մայիսի 14-ին Գաբ. Միրզոյան

Թիւրքաց կառավարութիւններին, որ Կ. Պօլսի կոնֆերանսի վճիռները վերջնական են և որ նրանք պաշտօնական դաշնակցութեան ձև ունենան: Այդ առաջարկութիւնը կատարվեցաւ և լաւ հետևանքներ ունեցաւ:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՑ

Կ. Պօլս, 1 մայիսի

Ճշգրտեալմբ հետեւելով իմ ընտրած պրօգրամին, որ է ուրիշներին թողնել քաղաքական առօրեայ խորհրդան ու պարապել միայն գործնական ու արդիւնաբեր ազգային ներքին հարցերով, առանձին բաւականութեամբ կը նստիմք այս փոքրիկ նամակս երկու նշանաւոր անձանց գործունէութիւններին, որոնցից մէկինը վերաբերում է լոկ տաճկահայերի կենսական պահանջներին, իսկ միւսինը ընդհանուր հայ ազգի նոր սերունդի ամենակարեւոր պէտքերին: Խօսքս մի յայտնի պոլսիցիտայի վրա է և մի նշանաւոր հայ գիտնականի, պոլսիցիտայ տաճկահայոց հրապարակախօսութեան վտերանին է: «Մանգուլի» էֆերայր» ասովոյ յայտնի լրագրի խմբագիրը, մի կենսաբիայի հանձնարով հայ, որը հայերէն լեզուն լաւ չիմանալու յանցանքը կարողացել է հարկւրապատիկ վարձատրել թիւրքերէն լեզուով իր քաղաքած ու յառաջ տարած բազմաստիակ ազգագրութեան գործնական գաղափարներով, որոնց մի առ մի հայելիը կը կազմէ մի մեծ կենսագրական նկարագիր, որը կը թողնուի նորան, ուսմ վիճակիւմ կը լինի կատարել սոյլ իր ժամանակին: Իսկ այժմ մի հայտնի միայն նորա ձեռնարկած մի մեծ գործը, որի մասին այսչափ տարի չը կարողացաւ հոգ տանել և մը տաճկէ ոչ մի Կ. պօլսիցի, այլ հարկաւոր եղաւ որ միայն հայաստանի մի մարդ օգնութիւն հասնէ Թիւրքաց Հայաստանի կարիքներին:

Պիտի իմանալ, որ ճիշտի էլ շատ գանգատվին մարդիկ Թիւրքիայի դատաւարներէրից Հայաստանում, դարձեալ անարդար վճիռներով մեծ մասը առաջ է դալիս հայ ժողովրդի անձանցութիւնից Թիւրքիայի նոր օրէնսդրական կողմերի հետ, որը առեւ է Թիւրքիան Եւրօպայից արդէն բաւական ժամանակ առաջ: Այդ կողմերը կազմում է վեց հատոր շատ մեծ գրքեր, որոնցից իւրաքանչիւրը բաղկացած է մօտ երեք հազար երկսօյից, որոնց ամբողջ բովանդակութիւնից Հայաստանի հայ ժողովուրդը ընտւ կրէ՛ք չէ կարողացել մի օգուտ քաղել իր իրաւունքները պաշտպանելու համար, նոյնչափ այդ կողմերը անօգուտ է եղել և Թիւրք ազգաբնակչութեան մէջ Թիւրքաց տառերի կարգացման գծաւորութեան պատճառով, իրաւաբանական գաղափարներ տաճկելու:

Ուշադրութեան առնելով այս հանգամանքը, ես այն որ Թիւրքաց նոր օրէնքները իմացութեւն չառ քիչերէն է յաճողում իրանց դատը անարդար կողմերի, «Մանգուլի» խմբագիր պ. Փանոսեանի գլխում ծնվում է մի վտանգ ու երջանիկ միտք, այն է, վերանայել այդ վեց հատոր գրքերը ու Թիւրքերէն տառերը փոխել նոցա մէջ հայերէն տառերի, որով ոչ միայն հայաստանցի հայը կարողանայ հեշտութեամբ հասկանալ այդ օրէնքները, այլ ես հայաստանցի մտաւորմանն էլ սովորէ հայոց տառերին, որովհետեւ որչափ էլ նա ջերմեանդ մուտուլման լինի, զարձակ արարական տառերից նոյնչափ միայն կարող է չանկել, որչափ միայն զօրանի մէջ, կարողաւոյ նորան այն էլ ոչ քաջ գրավարութեան հնորէւ, այլ միայն անդիւր բլրաբանելով: Հաստատամիտ ինչիցատորը չունենալով սակայն ներթական կարողութիւն իր ծախքով սպաղրել վեց հատոր կողմեր հայոց պատրաստով, յայտնում է իր միտքը՝ Ներսէս պատրիարքին, որ խիստ երջանիկ համարելով այդ գիտաւորութիւնը, հաստատ խօսք է առնում պ. Փանոսեանից, որ անմիջապէս կը ձեռնարկէ իր մտածած գործին, ներթականի կողմից յուսաւով իրան Ներսէս պատրիարքի վրա:

Սակայն Ներսէս պատրիարքը վստահ է լինում, որ Փանոսեանի մեծ գործի համար ճիշտ որ դիմէ Կ. Պօլս, ոչ ոք չի մերժի նորան նպատակուց: Բայց պատրիարքի այդ յայտը խաբվում է և, որչափ մեզ յայտնի է, այնչափ միշտ է պատճառում նրան, որ ամբողջ չաբաթ բոլորովին հիւանդ վիճակի մէջ է լինում, խեղճ շատ լաւ ճանաչելով իր Կ. պօլսիցիներին, դար-

ձեալ հաւատ է ունենում, որ այնպէս մի անհրաժեշտ գործի համար, նոքա անուշադիր չեն մնայ իրան խօսքին: Այս, գտնվում են մի քանի մարդիկ, որոնք սկսում են օգնել պ. Փանոսեանին, բայց նոքա էլ բոլորը գաւառացի, որոնց նպատար սակայն չէ կարող այնչափ օգնել, որ գործը շուտով համար իր նպատակին: Լսելով այս իրողութիւնը, ես չտապեցի ուսմ մօտ հարկն էր իմանալու թէ՛ քանի բաժանորդ է հարկաւոր գործը յառաջ տանելու ու վերջացնելու: Համար և ինչ է բաժանորդագիրը. ճիշտի դարձացայ, լուելով որ հերթ է ունենալ միայն յիսուսն բաժանորդ, իսկ բաժանորդագիրը 25 բուրլ գտնվում այսչափ բաժանորդներ այդ տաճան ու ֆեհտմեհական գործը կարող է երեք ամսվայ մէջ աւարտվել ու ձրիաւոր ցրվի: Հայաստանի գանապան վիլայիթները խաւար ու անաղաշտան ժողովրդի ձեռքը զէնք տալու համար:

Հիմայ գանք երկրորդին: Քայանի է, որ որչափ էլ յառաջ գնան առաւանջներ մէջ լրագրութիւնը, ազգային ուսումնաբանները ու լեզուն, այնչափ էլ ամեն մէկի համար մեծ կարիք է հայ լեզուի մէջ ունենալ մի լաւ բանալի, որով կարողանան ճիշտ արտայայտել այն բառերը, որոնց համար մենք չունենք մինչև հիմայ ոչ մի կատարելագործած բառարան օտար լեզուից հայերէնի օտար բառի թարգմանութիւնը ճիշդ հայերէնի իմանալու համար: Այսպիսի մի բանալի պակասութիւնից կամաց կամաց պատուարտվում են մեր լեզուին այնչափ օտար բառեր, որ մի հարկւր տաբուց յետ հաղել թէ տաճկահայը ընդունակ լինի հասկանալ իր առաւանջ եղբոր լեզուն: Ուշադրութեան առնելով ընդհանուր հայոց այս մեծ պակասութիւնը, մանաւանդ ընդհանուր հայ երկրապարտութեան այժմեան կարիքը, մի յայտնի հայ գիտնական, այնչափ յայտնի, որ իտալիէ համալսարանական բառգրքի մէջ մի ամբողջ շարք բառերի ուղղութիւն անելով, մնում է մինչև հիմայ լրագրի ամենալաւ աշխատակիցներէր մինը, ձեռնարկում է մի նոր, մեզ մօտ դեռ չընկած իր կատարելագործութեամբ բառարանի յօդման: Այս գիտնականը Կ. Նորայր Յիւզանդցիին է, որ պատմական լաւ Միթիթարեան օւնտին, կաթիլներով կոնսակում վէճերի ժամանակ այնչափ զայրացաւ ազգային զգացմունքը կրօնական մոլեռանդութեան զոհողներէ վրա, որ զէն գցեց իր վարդապետական կարգը ու հաստատակալ նախաճախական դառնալով, եկաւ կանգնեց լուսաւորականների դասի մէջ, որ էլ մի անգամ ընդ միշտ առիթ չունենայ սորա-նորա դանդախների ու խորհուրդների վրա ժամանակ կորցնելու:

Այդ երկատարող գիտնականը չուզեց իր տաղանդի հնորով ստացած այնչափ մեծ միջերը չարդիւնաբերել իր ազգի համար, երկի լաւ իմանալով, որ միւս անգամ երկրորդ Նորայր էլ զլժուայր դուրս կը գայ, ինչպէս որ չէ դուրս եկել մինչև հիմայ ոչ մինը Վենիսիւն և Վիեննայի գիտնականներէր: Վստայոյ նա ձեռնարկեց մի կատարել և ամեն ջանքով ֆրանսերէնից հայերէնի բառարանին, որի կէսից շատը արդէն վերջացել է: Փարիզի մէջ յայտնի գրավաճառ Հալէթ, առնելով լիտերից հայ գիտնականի աշխատութեան հոսը, դիմում է պ. Նորայրին, որ նա կանխաւ ստանայ ոչ միայն իր ապագութեան ծախքը, այլ ես բոլոր աշխատութեան վարձատրութիւնը, ծախելով իրան բառարանի վաճառման արտօնութիւնը: Հայ գիտնականը մի կողմից մեծ յոյսեր դնելով իր սեփական ազգի վրա, միւս կողմից շատ լաւ է հասկանում թէ քանի պատիկ պիտի ծծէ հայ սերունդի գրգանք փարիզի գրավաճառը, մերժում է նորան. բայց երեւակայեցէ՛ք կրկին ինչ գործողութիւն. բառարանի կէսը սպաղրելով, խեղճ մարդը էլ միջոց չունէ իր գործը շարունակելու: Գիտում է սորան, դիմում է նորան և թէպէս ստանում է աւելի համակրութիւն, քան թէ կարելի էր սպասել Կ. Պօլսի հայերից, դարձեալ ոչ այնչափ, որ կարելի լինի գործը շարունակել անխախտ:

Ես տեսակցեցայ, ցաւակցաբար մի օտարի միջոցով, պ. Նորայրի հետ, ցոյց տալով նորան մի և նայն ժամանակ պ. Գեք. Պատկանեանից իմ ստացած մի նամակը, որի մէջ ես ասում էր իմ միջի այլոց. «Եթէ անանկ պ. Նորայրին, առեւցէք նորան որ անհամբերութեամբ սպասում եմ նոր բառարանի աւարտման»: Խեղճ միտքով անօգնական գիտնականը բաւական սիրտ է առնում առաւանջ յայտնի գիտնականի խրախուսից և ամօթխաճութեամբ բանում է ինձ իր ծանր վերքը, որի մասին ահա պարտաւորութիւն

եմ համարում խօսել ձեզ հետ: Այդ բառարանի վրա հայ գիտնականը իր կենքը մաշել է: Բառարանի բաժանորդագրութեան վինն է 20 բուրլ: Գտնելով բառարանի արդէն ապագրված մասից, նա կը լինի գրեթէ երկու անգամ աւելի հաստ, քան թէ երեւոյթներին առեւերէնից հայերէն բառգրքը, բայց ապագրված շատ մասը տառերով: Գուցէ շատերը կարծեն թէ առաւանջ բառերի հայերէն թարգմանութեան համար, ֆրանսերէնից հայերէնի բառգրքով ոչինչ չէ կարելի տանել, բայց ով հենց քիչ գործ է ունեցել բառարանների հետ, նա կը համոզվի, որ հարկ չը կայ իւրաքանչիւր առեւերէն բառի հայերէնը գտնել միայն առեւերէնից հայերէնի բառգրքի մէջ, այլ կարելի է մի բառի նշանակութիւնը գտնել առեւերէնից ֆրանսերէն, իսկ ֆրանսերէնից էլ ճիշդ հայերէն: Այսպիսով անգղայի կերպով առաջ կը գայ պարապրդի համար այն, որ մի քանի տարից յետ, նա կը տեսնէ, որ անկատելի կերպով սովորեց և ֆրանսերէնը: Այս բանը կարծեմ որ շատերին յայտնի լինի անհնական փորձերից:

Այսպէս թէ այնպէս պ. Նորայրի բառարանը, ինչպէս մի հրաշակեալ իր տեսակի մէջ, ամենայն պարծանքով իւրաքանչիւր հայ գրագիրի սեղանի վարդ կարող է համարվել, վստայոյ մի կողմից նորան ձեռք բերելու համար, միւս կողմից այդպիսի մի գործ յառաջ տանելու համար, հարկաւոր է ձեռք մեկնել այդ մարդուն բաժանորդ գրվելով ու ուղարկելով բաժանորդագիրը գիտնականին՝ նպատուղ մասնաժողովի գանձապետ, Կ. Պօլսի յայտնի սեղանաւոր պ. Գ. Սաւանի-Մանի-Մանի-Մանի: Մասնաժողովը բաղկացած է տաճկուսոյ յայտնի անձնութիւններից, որոնք ստանալով գանաղան տեղիցի բառարանի բաժանորդագրութեան փողը, մի կողմից նպատում են խեղճ աշխատաւորի ապրուստին, միւս կողմից նորա հակադէպ գործի հետեակցական ապագրութեան:

Գրեգոր Նիկողոսեան

ԱՐՏԱՐԻՆ ԼՈՐԵՐ

«Միջազգային հեռագրական ընկերութեան» Լօնդօնից հաղորդում են հետեւելը «Համայնքների ժողովում Գիլի յայտնեց, որ Ֆրանսիան հրաւիրում է առեւտրական նոր զանազակ վերաբերութեամբ բանակցութիւններ սկսել Բանակցութեանը պէտք է Լօնդօնում կատարվեն: Ֆրանսիայի ներկայացուցիչը կը լինի Շալմէ-Լալուր, իսկ Անգլիայի կողմից—Սարի և Բուլի: Անգլիան գործակալներ եւ կը նշանակի: Միթիթարը յոյս ունի, որ նրանք հինգշաբթի ապէս պատասխան Գիլի կարգաց մի քաղաքը Ռուսաստանի օրէնքներից հրէաների բնակութեան վերաբերութեամբ Ռուսաստանում: Նա յայտարարեց, որ կառավարութիւնը եռանդաւ կերպով բողոքեց բրիտանական հարստիկ Լիվինսոնի Պետերբուրգից արտօնելու գէմ Կոնէրի, Ռուսիլի և Վօրմսի հարցմունքներին Գիլի պատասխանեց, որ կառավարութիւնը դեռ հաստատ չէ որոշել առաջարկութիւններ անել Ռուսաստանին նրա հարաւում հրէաների գէմ կըսած բռնաբարական վարմունքներին մասին, նոյնպէս և Պարսկաստանին հարաւ-արեւմտեանական ազգաբնակչութեան դրութեան վերաբերութեամբ:

Լօնդօնից հեռագրում են լրագրիներին, մայիսի 8 ին (20) հետեւելը: Լօրդերի ժողովում Գրէնվիլ պատասխանելով Կանիտօնին, ասաց, որ «կառավարութիւնը առաջարկութիւններ չէ ստացել ապատանի իրաւունքի վերաբերութեամբ: Անգլիայի հայեցածը այդ խնդրի վրա այնպէս յայտնի է, որ այդպիսի առաջարկութիւններ անհաստատ են: Բայց Ռուսաստանը չը հարցրեց Գիլմանիայի համաձայնութիւնը Անգլիայի մասնակցութեան մասին այն կօնֆերանսիային, որ նպատակ ունի գործնական միջոցներ գտնել յայտնի ընկերութիւնների յանցաւոր ձգտումները ճնշելու համար: Զարմանալի չէ, որ թագաւորապետութիւնից յետոյ Ռուսաստանը յանցանքներին վերջ դնելու այլ միջոցներ թուում, ինչպէս և Եւրօպայի պետութիւնները գործակցութեամբ: Բայց չը կարճէք, որ նի՛նիլիզմին համակրում է կառավարութիւնը, անօգուտ համարելով կօնֆերանսիային մասնակցել: Եթէ նի՛նիլիզմը այն է, ինչ որ երեւում է,

*) Պ. Մոմհանի հասցէն այսպէս է. Constantinople, Galata, Mehmet-Ali-pacha han, № 4.

այսինքն մեծ ընկերութիւն քաղաքակրթված հասարակութեան օրէնքներին և հիմնարկութեանց դէմ, եթէ նրա գործունէութեան եղանակն է բռնաբարութիւններ և սպանութիւններ, ուրեմն շատ պարզ է, որ Անգլիայի պարտաւորութիւնն ու օգուտն է հանդէս դուրս գալ դէմ և պատժել դրան: Բայց ես կարծում եմ, շարունակեց առեւտրանը, որ առ այնքան է իրաւործելի, որքան որ օրէնքներն են թոյլ տալիս: Իմ կարծիքով, մեր օրէնքները բաւական են նպատակին հասնելու համար: Ոչ մի տեղ թագաւորապետութեան լուրը այնպիսի զայրոյթ չը յարուցեց, որպէս մեզ մօտ. բայց, այնու ամենայն, մեր մասնակցութիւնը կօնֆերանսիային ոչ մի գործնական հետեանքի չէր հասցնի: Բայց վերջաբանութեան մէջ առեւտրանը ասաց. «հրաժարվելով կօնֆերանսիային մասնակցելուց՝ դրանով աւելի ես մեծ պարտաւորութիւն է դրվում մեզ վրա խիստ կերպով գործ դնել արդէն եղած օրէնքները միւս կառավարութիւնների ապահովութեան համար, առաջն առնելով մանաւանդ թէ մասնաւոր անձերի, և թէ օտար թագաւորների սպանութեանց և սպանութեան փորձերի:

—Փարիզից հեռագրում են մայիսի 8-ին (20), որ Մատերի մօտ մայիսի 6-ին երկրպետ կռիւ սկսվեց: Ֆրանսիայիցներից վեց մարդիկ սպանվեցան: Կրումիրները սոստիկ Ֆլաուվեցան. լսելով թիւղանթի նետումները, նրանք փախչում էին:

—«Daily News» լրագրին Լօնդօնից մայիսի 8-ին Մերվից հաղորդում են, որ տեղական բոլոր զլուստրները Անգլիայի հետ պաշտպանողական դաշն կապելու մասին խնդրեց ստորագրեցին և այդ խնդրքը արդէն ուղարկեցին անգլիական դեսպանութեանը Թէհրանում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Մ Ի Զ Ա Զ Գ Ա Յ Ի Ե Ը Ե Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ն Ի Ց

ՓԱՐԻԶ, 13 մայիսի: Գամբետտա ուղևորվեց դէպի Կաթէր: Մօնրօսի մէջ գտնվեցաւ ճայթող ռուսներ պատրաստող մի գործարանի երեք մարդ կարճաւորված են: ՍՕՖԻԱ, 13 մայիսի: Բօլորիայի իշխանը դիմեց հեռագրով միւնիստրախաղաչին, որի մէջ յիշում է երեք յօդուածներով այն իր առաջարկութիւնները, որ ինքն անհրաժեշտ է համարում մոցնել կառավարութեան մէջ: Իշխանի առաջարկութեամբ ազգային ժողովը պէտք է ընտրութիւն անի այդ յօդուածների ընդունելութեան և իշխանի հրաժարանի մէջ: Առաջին յօդուածով իշխանին յանձնվում է եօթ տարիայ ընթացքում իրագոր իշխանութիւն նոր հաստատութիւններ իրագործելու. երկրորդ յօդուածը ընդմիջում է ազգային ժողովի սէսիան. երրորդը իրաւունք է տալիս իշխանին դուստրել եօթ տարիայ ընթացքում ազգային մեծ ժողովը, սահմանադրութիւնը վերաքննելու համար: Իշխանը ընդունեց խաբօթօ ռուսաց գործակատարին: Վարդ իշխանը ուղևորվելու է դէպի գաւառները և խաբօթօ նրա հետ կը ճանապարհորդի:

ԼՕՆԿՈՆ, 13 մայիսի: Օնտարիօ Ժակիի վրա ալկոհոլիզմը չի կտորիս՝ շոգենաւոր խեղդվեցան 175 հոգի:

ՍՕՖԻԱ, 12 մայիսի: Նախկին միւնիստր Կարապիլով կալանաւորված է: Սօֆիայում, Բուլղարիում, Վիդզիում և Տրիպոլիում յայտնված է պաշարման դրութիւն: Զօրս զինեակները նշանակված են արտակարգ կոմիսարներ:

ԱԹԵՆԵ, 12 մայիսի: Կամաւորների արածախմբ նշանակված է եկող շարքին:

ԼՕՆԿՈՆ, 12 մայիսի: Գրէնվիլ ընդունեց անուանի հրէաների պատգամաւորութիւնը, որ ներկայացաւ նրան Ռուսաստանի հրէաների վրա գործված բռնութիւնների առիթով: Գրէնվիլ ասեց. իմանալով թէ որքան զգայուն են օտար ազգիւր դէպի միջամութիւնը իրանց ներքին գործերի մէջ, ես չեմ կարծում որ յարմար լինէր պաշտօնական առաջարկութիւններ անել ռուսաց կառավարութեանը:

Խմբագիր—հրատարակող ԳԻՐԻՊՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Յ Ե Յ Տ Ե Ր Ե Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՎԻՆՆԱԻ ՄԵՔԷԼ (աթուղիներ և բաղկաթուղիներ) ծախվում են մեծ քանակությամբ և մանր, միջին փողոցում կատարվող փողոցի անկիւնում ՄԻ-ՔՍԵԼ, ՏԵՐ-ՆԻԿՈԼՈՍՅԱՆԻ պահեստում:

Օտարաբաղադրացիք կարող են զինել այս հասցեով: **Тифлисъ, Михаилу Н. Теръ-Николосову.**

1—150

Թիֆլիսի հայոց ծխական ուսումնարանների ներկայ 1881 թ. տարեկան հարցաքննութիւնները

- Մայիսի 22 և 23-ին կաթողիկէ Ս. Գէորգ եկ. ուսումն.
- " 25-ից—30-ը Հաւլարարի Մարիամեան օր. ուսումն.
- " 28 և 29-ին Կուկիու թանդոյեան օր. ուսումն.
- " 30-ին Հաւլարարի Ս. Մինաս եկ. ուսումն.
- Յունիսի 1 և 2-ին Կուկիու Ս. Աստուածածին եկ. ուսումն.
- " 3 և 4-ին Զորաշէն եկ. ուսումնարաններում.
- " 5-ին Շամքուեցոց եկ. ուսումնարանում.
- " 6-ին Չորաբաշի Ս. Գէորգ եկ. ուսումնարանում.
- " 8-ին Ս. Կարապետ եկ. ուսումնարանում.
- " 9-ին Չուղուբէթի Ս. Աստուած եկ. ուսումնարաններում.

Թեմական վերապատկառ Քարխուզարեանց

Արդէն ուղարկվեցաւ իւր բաժանորդներին **ԲԱՅՅԻԻ ԽԵՆԹԸ**՝ անու-նով վրայասանութիւնը: Նոր գնել ցանկացողներին խնդրում ենք զինել ՇՈՒՇԻ, կամ ուղղակի հրատարակչին, կամ Մահաթի-Յաղոբեանցի տպարանը: ԲԱՅՅԻ՝ պ. Ալեքսանդր Թարխանեանցին, թԱՐԿԷՁ՝ պ. Գրիգոր Բէշտեանցին, Հրատարակչի հասցեն. Մյուս, въ конторѣ Армянца АБЪЛУ АП-РЪСЯНЦУ.

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում են **Կենտրոնական Գրադաճառնոցում հեռեկալ գրքերը:**

1. Հայ և չայ ա տ ա ն ը օ տ ա Ր Ն Ե Ր Ի ա չ ք ու մ, հրատարակական դա-ստիստութիւն ընթերցանութիւն Թիֆլիսի ժողովարանում մայիսի 17-ին 1879 թ. Արգար Յովհաննէսեանի. թ. 1881 թ. գ. 30 կօպ.
2. Մ ա ա լ ո Ր Ֆ ի զ ի ք ա կ ա ն և բ ա Ր յ ա կ ա ն ի ն ք ն ա կ Ր Թ ո լ Թ ա ե ն մ ա ի ն, խորհուրդներ այն երկրասարգներին, որոնք կանքի ասպարէզը մտնում և ցան-կանում են կանոնաւորապէս պատրաստուել ուսումնական և հասարակական դործու-նէութեան համար. հեղ. Ջոն Մալարա Բելկիի, թարգ. Գր. Շահբազարեանց Տ. 1881 թ. գ. 60 կ.
3. Հ ե ն չ է լ ի. Բանաւոր և զբաւոր հաշուելու խնդիրներ ծխական դպրոցների համար փոխարկեց Ս. Մանդիլեանց 1-ն և 2-դ տարի, թ. 1881 թ. գ. 40 կ.
4. Ք ն ա Ր Ժողովրդական երգեր հեղ. Խաչ. Տէր-Խաչատրեանց, Երեւան 1880 թ. գ. 45 կ.

Ն ո յ ն ա ե ղ ը վ ա ճ ա ո վ ու մ են հ ե ա ե ա լ գ Ր ք ե Ր ը:

5. Մարիուս Արեւիկոս կայսեր խմատաւարական և խրատական թղթերը, Վ. Ե-նեանի գ. 1 ր. 50 կ.
6. Բ ի չ չ ի ո լ յ ա. Պատմական վրայասանութիւն Գ. Վ. Սէնդին Գաղղիացոյ Վ. Ենեանի գ. 1 ր. 50 կ.
7. Մ ա գ զ ա ղ ի ն է վրայասանութիւն Պ. Յուլիոսի Սանտոյ. անգամ Գաղղի ձեւարանին, Վ. Ենեանի գ. 1 ր.
8. Ս ղ. Կենտրոնական թղթերում ի մահն Արեւի թարգ. Հ. Մանուէլի Վ. Զախ-ճախեան Վ. Ենեանի գ. 1 ր. 75 կ.
9. Ֆինկոնի Արեւիկոս Տէրեմաքայ, թարգ. Եղեարդայ Վ. Հուրմուզեան Արք-եպ. Շիրակայ Վ. Ենեանի գ. 3 ր. 50 կ.
10. Առակք Եղեարդայ, թարգ. ի գաղղիական լեզուէ Հ. Մինաս Վ. Բժշը-կեան Վ. Ենեանի գ. 2 ր. 50 կ.
11. Յուլիոսի Կենտրոն յիշատարանք գաղղիական պատերազմին, թարգ. Հ. Ար-սեանի Գ. Բազրատունց Վ. Ենեանի գ. 1 ր. 75 կ.
12. Աշխարհագրութիւն հին և նոր Հայաստանեայց դպրատանց տղայոց հայոց համար Հ. Մանուէլ Վ. Քաջունի Վ. Ենեանի գ. 1 ր. 50 կ.

Օտարաբաղադրացիք ծանապարհի ծախք են վճարում իւրաքանչիւր թուրքում 10 կ. առանց փողի պատուէրները չեն կատարվում:

2ր նոյնիւր մաքսերի աւելանալուն ապրանքները առաջիկայ գնելով կը ծախվին. **ԿՈՆԳՈ-ԹԷՑ** 1 ր. 5 կ. և 1 ր. 10 կօպ, շատ լաւ **ՄՕՆԵՆԳ** 1 ր. 20 կ. և 1 ր. 40 կ., հիւնալի **ԿԱՅՍԱՆԻ** 1 ր. 60 կ. և 1 ր. 80 կ. և **ԱՄԵՆԱԼԱԻ** **ԹԷՑ** 2 ր. առանց թղթի: Անգլիական բէզովիներ 4 ր.—40 ր. և հրացաններ 20 ր.—200 ր. Անգլիական խանութի մէջ: Գործակալութիւն **ԲԱՐՆԱՐԻ ԹԱՄԲԵ-ՐԸ**, ջօնսօնի **ԿՈՂՊԷՔՆԵՐԸ**, ճուրհորի **ԳՐԻՉՆԵՐԸ** և էկստրակտ կակաօ-շօխոյղի ծախելու համար, որոնք վարիզի հանգիսի ժամանակ ոսկէ մեղաւ ստացան: **ՀՈՏԱԻԷՑ ԹԷՑԻ ՖՈՒՆՏԸ ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՑԱՄԱՆՈՎ** 1 ր. 65 կ. և աւելաւար 2 ր. 30 կ.: Վաճառականներին օգտաւէտ է մեծ քանակութեամբ ապրանքներ առնել Անգլիական խանութի մէջ: Ամբողջ հազուստ 15 ր., կօնֆետներ հազի դէմ 60 կ. ֆուռար:

75—100

144 Արծրունու զալէրէա 144
ամենախճան պահեստ
մերթի և հազիլները:

Թիֆլիսում կազմվում է «Մարմնամարզական ընկերութիւն» (Гимнастическое общество), որի նպատակ է տալ իր անդամներին միջոց վարժ-վելու մարմնամարզութեան սրահադպրութեան (фехтование) և հրացան արձակելու մէջ, քա-ղաքից դուրս զբոսանքներ և ուրիշ թուղ տված զուարճութիւններ անել, որոնք զարգացնում են ֆիզիկական կարողութիւնը:

Ընկերութեան կանոնադրութիւնը տէրութիւ-նից արգէն հաստատված է և սպված է № 90 «KABAZE» լրագրի մէջ, տպրիլի 25-ին:

«Մարմնամարզական ընկերութեան» անդամ զրվել և տարեկան 10 թուրքի վճարել կարելի է:

- 1) Փոխարքայի գլխաւոր կառավարութեան դեպարտամենտում, կարլ կարլովիչ Կետտերի մօտ, ամենայն օր 11 ժամից մինչև ժամի 3 ցե-րեկվալ:
- 2) Վիկտոր Ալեքսանդրովիչ Գինգելաւտի մօտ 6-ից մինչև 8-ը երեկոյեան, թամաճելի տանը, Սուլաւտիլի բազարի վրա:
- 3) «KABAZE» լրագրի խմբագրութեան մէջ:
- 4) Ալեքսանդր Ալեքսանդրովիչ Բրուսի մօտ:

Միտայելովայա փողոցի վրա, ուստական մա-զալիւնում:

«Խ Ե Ն Թ Ը»

ԱՐԿԱՆԵՐ ՎԵՐՁԻՆ ՌՈՒՍ-ՌՈՒՐԲԱԿԱՆ ՊԱՏՐԱՋՄԻՑ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ ԲԱՅՅԻԻ

Տպված մաքուր թղթի վրա, զիրքը բաղ-կանում 400 երեսից: Թիֆլիսում ծախվում է «Մշակ» խմբագրատանը, «Կենտրոնական գրադաճառանոցում», «Կովկասեան գրա-վաճառանոցում» պ. Զաքարիա Գրիգորեան-ցի մօտ, և պ. պ. Շահինեանցի, Բօզար-ջանցի, Հովսէփեանցի ծխատոթ մազալիւն-ներում:

Գինն է 1 թուրք 20 կօպ:

ԱՐԾՐՈՒՆԻ զալէրէում յուլիս ամսից վարձով տրվում է ՌԱՏՐՕՆԻ մօտ եղած բուֆէտը և ընտարանը: Ցանկացողները թող զինեն Արծրունու զալէրէայի կան-տօրա:

8—10

ԻՆՉ Է ՊԱՏՃԱՌԸ ՈՐ ԱՆԳ-ԼԻԱԿԱՆ ՄԱԳԱՋԻՆԸ ծախվում է այժմ այնքան մեծ քանակութեամբ թէյ և այլ ապրանքներ: Որովհետեւ այդ մա-զալիւնը ստանում է թէյ ուղղակի պլան-տատօրներից, առնում է բոլոր ապրանքները ուղղակի զործարաններից և բաւականա-նում է փոքր շահով: Այդտեղ կայ սովո-րաբար 50,000 ֆունտ թէյ առաջին տե-սակի, կակաօ և շօխոյղ-ֆրայ, մուրաբա և կօնֆետներ 25% աւելի էժան, քան թէյ ամեն տեղ, անկողիններ, հրացաններ, բէ-վովէրներ, կողպէքներ, մատուցարաններ, ա-մաններ, դանակներ, զրալներ, թէյաման-ներ, բաժակներ, թմաքեր, զուլպաներ կանանց և տղամարդկանց, թաշկինակներ-մակիւնտօշներ, կալիւսօր, թուղթ, մատիա-ներ, տետրակներ, զրիչներ ամեն ձեւի-համար և այլն, 20 մինչև 40% աւելի է-ժան քան թէյ ուրիշ տեղ: Արծրունու զալէրէում:

100—97

Въ Редакціи газеты

«МПАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ՎԱՃԱՌՈՒՄՆ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ
ՄԷՋ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ճըժիւ մեքնա-ներ 1 ր., ԲԱՃԱԿՆԵՐ 12 կ., ԶՐԱՄԱՆԵՐ 50 կ., հրացաններ 20—100 ր., ՄԱՏՈՒ-ՑԱՐԱՆԵՐ 5 կ. մինչև 5 ր., ՄԱՃԱԿԱԼ-ՆԵՐ 5—50 ր., ժիւններ 75 կ., վարակի-ներ 4 ր., ՄԱԿԱԿԱՆ ՀԱՌՈՒՍՏՆԵՐ 1 ր. տղամարդկանց 14 ր., ԳԼԽԱԿՆԵՐ 1 թուրք, մակիւնտօշներ 6 ր., հին պօրովէյն և խերս 1 ր. 20 կ. շիշը, կօնիակ առա-ջին տեսակի 1 ր. 75 կ., ՊԵՆՈՒԼԻ 50 կ., թէյամաններ 25 կ., ՊԱՏՈՒԱԿԱՆ ԹԷՑ 1 ր., 40 կ. առանց թղթի: Ծախվում են ԱՆ-ԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ: ԱԼԲՐՍԵՐ շատ էժան:

12—15

ՄԻՆՉԵԻ 1881 ԹՈՒԱԿԱՆԻ ԱՊ-ՐԻԼԻ ՎԵՐՁԵՐԸ ՇՈՒՇՈՒՄ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ ԱՅՍ ՎԵՑ ԳՐԳԵՐԸ:

- 1) Երկու մանրավէպ. Ալֆօնս Դօդէից թարգմ. Տէր-Աւետիքեանի, գինն է 15 կ.
- 2) Պօզնանու ուսուցչի օրագրից, թարգմ. Տ. Նազարեան: 20 կ.
- 3) Պատգամ ժամեր, ինքնուրոյն բանաս-տեղծութիւններ: Ն. Տ. Աւետիքեան: 25 կ.
- 4) Ճանապարհորդութիւն Ղարաբաղում, Արցախից: 30 կ.
- 5) Ծաղիկ և ծաղկահատութիւն, թարգմ. Տ. Նազարեանից: 15 կ.
- 6) Քնար խօսնակ, բանաստեղծութիւն-ներ Ն. Տ. Աւետիքեան: 50 կ.

Այս վեց գրքի գինն է միասին 1-50 կօպէլ: Առանձին մէկի համար բաժանոր-դագրութիւն չէ ընդունվում, բացի «Քնար խօսնակից» որի համար առանձին կարելի է ստորագրել և մնացեալ հինգը առանձին: Հրատարակչ Տիգրան Յ. Նազարեան:

1—15

«ԵԳՐ ԿԱՍՈՒՄՈՎ և ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՐԸ-խաւոր գրասենակի մէջ, Երեւանիայա հրա-պարակի վրա, Զակելու տանը բացված է ստորագրութիւն յօդուտ ի Տէր Զանգու-ցեալ Կայսր Ալեքսանդր II-ի ՈՐԲԱՆՈ-ՑԻ, որ բացվելու է Թիֆլիսի մէջ:

Արդէն վաճառվում է

ԻՆՉ ԲԱՆ Է

ԺԱՆՏԱԽՏԸ

Ինչ բանով կարելի է փրկուել նորանից և այլ տարափոխիկ տկարութիւններից: Ժո-ղովրդական և հասարակաց մասշին իրաւո բժիշկ Պ. Ա. Ելինսկոյ:

Թարգմանութիւն Ա. Ս. Գուլամիրեանց Գինն է 15 կօպ. 100-ներով գնողներին վի-ճումն կը վերի: Մեր հասցեն՝ Въ Эривань

А. Гуламирянцу